ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(ԶՈՄԻՆԻՄՈՒՄ)

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

636(02)
22 DEC 2017

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(ԶՈՐՄԻՆԻՄՈՒՄ)



ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

Գլխ. խմբագիր՝ Ս. Խաչատրյան
Թարգմանիչ՝ Վ. Աթոյան
Ղեկվ. խմբագիր՝ Զավախեցի
Տեխն. խմբագիր՝ Գ. Սարոյան
Սրբագրիչ՝ Ե. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. փետրվ. 17-ին.
Ստորագրվել է տպագրելու 1934 թ. փետրվ. 27-ին.
Գլավլիտ № 120 Տիրաժ 3500 Պատվեր № 123

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

11-27364

ԽՈՇՈՐ ՅԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

I. ՀԱՍԱԿԱՎՈՐ ԿԱԹՆԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

1. Անասուններին կերակրել ըստ նորմաների, նկատի առնելով նրանց կենդանի քաշն ու արդյունավետությունը (ըստ ստացած կաթի ու քաշի %-ի)։

2. Բոլոր անասունները բաժանել խմբերի, ըստ նրանց կենդանի քաշի ու արդյունավետության, սահմանելով յուրաքանչյուր խմբի համար օրական կերի վորոշ նորմա։

3. Կերերի փչացումներից խուսափելու համար, ամեն մի անասնագոմում կառուցել մսուրներ։

4. Ձմեռային շրջանում անասուններին կերակրել օրական յերեք անգամ, հիշտ սահմանված ժամերին, օրվա ամբողջ կերի նորման բաժանելով յերեք հավասար մասերի։

5. Արգելվում է անասուններին կերակրել գետնի վրա, առանց մսուրի։

6. Անասուններին ջրել օրական յերկու անգամ կերերը բաժանելուց հետո, չսահմանափակելով ջուր խմելու չափը։

Պետք է աշխատել, վորպեսզի ջուրը մաքուր լինի, իսկ ձմեռային շրջանում իր ջերմությամբ հավասար լինի անասնագոմի ջերմությանը — 10—12°C։

Անասուններին պետք է ջրել գոմերում, հատկապես հղի մայր անասուններին, վորոնց գոմից դուրս ջրելու տանելը, մանավանդ հղիության վերջին յերկու ամսում, խստիվ արգելվում է։

7. Անասունների կերակրելն ու ջրելը կատարել տվյալ ֆերմայի համար սահմանված աշխատանքի ներքին կանոնադրության հիման վրա։

Կերակրումը կատարել կթելուց հետո։

Սահմանվում է կերակրման հետևյալ կարգը՝

Սկզբում բաժանել խտացրած—ուժեղ կերը, հետո՝ հյութալի կերը, իսկ վերջում՝ կոպիտ կերը։

Ամեն մի տեսակ կերի բաժանումը կատարվում է առաջինի լրիվ ուտելուց հետո, այսինքն՝ յերբ խառացրած կերը լրիվ կերած կլինեն, բաժանել հյութալի կերը, հյութալի կերերը լրիվ ուտելուց հետո՝ բաժանել կոպիտ կերը։

Ամեն անգամ ուտելուց հետո անհրաժեշտ է մսուրը մաքրել կոպիտ կերի մնացորդներից։

8. Արմատապտուղներով կերակրման ժամանակ (կարտոֆիլ, գետնախնձոր, ստեպղին, ճակնդեղ) անհրաժեշտ է նախորոք մաքրել, լվանալ ու մանրացնել այն։

9. Անասուններին կերակրել լավորակ կերերով։

Անվորակ կերերը հիվանդություններ են առաջացնում և հաճախ անասունների կոտորածի պատճառ դառնում։

Խոտը պետք է մանրացնել ցողուն մանրացնող մեքենայով (саломорезка) ու նոր տալ անասուններին։

10. Կաթնատու կովերից յուրաքանչյուր գլխին պետք է ապահովել որական 10-ից—20 կգ սիլոսով և 10—20 կգ արմատապտուղներով, միաժամանակ նկատի առնելով անասունի կենդանի քաշն ու արդյունավետությունը։

11. Խառացրած կերերն անպայման պետք է տալ աղացած կամ մանրացրած դրությամբ։

12. Կովերին հղիության շրջանում պետք է առատ կեր տալ, վորպեսզի բարձրանա նրանց քաշն ու վորակը, իսկ դրա շնորհիվ, ծնելուց հետո կբարձրանա և նրանց կաթնատվությունը։

Հղի կովի որաբաժինը պետք է ավելացնել կերի սովորական նորմայից կերերի մեկ միավորով։

13. Նոր ծնած կովերին պետք է կթել ծնելուց 10—15 որ հետո, ավելացնելով կերը մինչ այդ առացած կերաբաժնի 25—30 տոկոսով։

14. Մսրային կերակրելուց արոտային կերակրման անցնելը պետք է կատարել աստիճանաբար, 7—10 որվա ընթացքում, հեղհեղտ վարժեցնելով թարմ կանաչ խոտի։ Նույնը պետք է կատարել արոտային կերակրման շրջանից մսրային կերակրման անցնելիս։

15. Ցերեքնուկի և առվույտի արոտավայրերում արածեցնելու ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել, վորպեսզի փորուռուցք առաջ չգա և նախ քան արածեցնելը կերակրել կոպիտ կերերով։ Այդպիսի արոտավայրերում խուսափել առավոտյան ցողի ժամանակ և անձրևներից հետո արածեցնելուց։

II. ԽՈՇՈՐ ՅԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Անասուններին մաքուր պահել։ Ամեն որ կթելուց հետո պետք է խոզանակով կամ ծղնոտով մաքրել։

2. Անասունները պետք է կանգնած լինեն չոր ցամքարի վրա, վորն ամեն որ պետք է փոխել թրջվելուց հետո։ Ծննդաբերության և հորթերի բաժիններում ցամքարը պետք է փոխել որական 2—3 անգամ։ Խոշոր անասունի տակը պետք է փռել որական միջին թվով 3 կգ, մինչև $1^1/_2$ տարեկան մատղաշի տակը—$1^1/_2$ կգ։

3. Անասունների աղբը պետք է մաքրել որական յերկու անգամ և դուրս տանել գոմից։

Արգելվում է աղբը գոմում կուտակված պահելը։

4. Յուրաքանչյուր 10-որը մեկ անգամ պետք է գոմը հիմնովին մաքրել։

5. Գոմերը պետք է միշտ չոր պահել, ուստի ջրելու ժամանակ չպետք է հատակին ջուր թափել կամ շաղ տալ։

Գոմում յեղած ջրի տակառների բերանը միշտ պետք է ծածկած պահել։

6. Ձմեռը, բացի հատուկ ցուրտ որերից, պետք է անասուններին որական 2—3 ժամ դուրս հանել զբոսանքի։

7. Կենդանի քաշը տարեկան վորոշվում է 2 անգամից վոչ պակաս։

ա) գարնանը՝ արոտավայր ուղարկելուց 10 որ առաջ և

բ) աշնանը՝ մսուրային կերակրման անցնելուց 10 որ առաջ։

8. Արոտավայր ուղարկելու նախորեյին պետք է անասունների սմբակները մաքրել ու կտրել։

9. Հղիության յերկրորդ շրջանում գտնված կովերին ամառային արոտավայրերում յեղած ժամանակ պետք է մյուս կովերից առանձնացնել, նրանցից առանձին խումբ կազմել ու սահմանել հատուկ հսկողություն։

10. Մինչև արոտային շրջանը պետք է անասնապահներին ծանոթացնել վարակիչ և այլ հիվանդությունների ու նրանց կանխման միջոցառումների հետ։

11. Արոտավայրերում արածեցնելու ժամանակ ապահովել լավորակ մաքուր ջրով։ Ջրելու այդ վայրը արոտից 2—3 կիլոմետրից ավելի հեռու չպետք է լինի։

III. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԾՈՒՄԸ

1. Հոտում յեղած իր արդյունավետությամբ ու առողջությամբ աչքի ընկնող լավ կովերից ստացած, լրիվ զարգացած ու ցեղական հատկություններով ոժտված արտադրողներին պահել տոհմական նպատակների համար՝ իսկ մյուս ցուլիկներին թողնել մսացուցի համար։

2. Մատղաշ արտադրողներին զուգավորման թողնել $1^1/_2$—2 տարեկան հասակից վոչ շուտ։

3. $1^1/_2$-ից—2 տարեկան արտադրողի զուգավորման բեռնվածությունը ամսական 5—6 կովից ավել չպետք է լինի։

Այդ հասակից բարձր արտադրողի նորման կարող է լինել մինչև 60 կով, իսկ ազատ զուգավորման ժամանակ՝ մինչև 30 կով։

Կոլտնտեսական-ապրանքային ֆերմաներում անպայման պետք է ձեռնաքաշ զուգավորում կատարել։

4. Ցերկու տարեկան հասակից բարձր արտադրողներին լրիվ ոգտագործելուց հետո վեցորյակում մեկ որ պետք է հանգիստ տալ։

5. Նույն արտադրողով մեկ որում չպետք է յերկու անասուն ծածկել։ Այդ կարելի յե անել միայն այն դեպքում, յերբ մի որ առաջ տվյալ արտադրողը զուգավորում չի կատարել։

6. Զուգավորման ժամանակ նույն կովին 2 անգամ չպետք է ծածկել։

7. Արտադրողներին գարնանը ամռանն ու աշնանը պետք է պահել թարմ ոդում—դուրսը։ Գոմում պահել միայն վատ յեղանակներին։

Զմեռը արտադրողներին դուրս հանել զբոսանքի որական 2-ից 3 ժամ, բացի վատ որերից։

8. Ցերինջներին զուգավորման թողնել 2 տարեկան հասակից վոչ վաղ։

9. Կովերին զուգավորման թողնել (ծածկել) ծնելուց 40-ից 50 որ հետո։

10. Կովը ծնելուց $1^1/_2$—2 ամիս առաջ պետք է դադարեցնել կթելը։

11. Տոհմական անասուններ ունեցող տնտեսությունները պետք է տոհմական անասուններին ծածկեն միայն պլանայնորեն աղնվացնող ցեղի արտադրողներով։

12 Անասնապահական ապրանքային ֆերմաները պետք է միությենական ՀԺԿ-ի կողմից հաստատված ձևով դրանցում կատարեն՝

ա) արդյունավետության հաշվառում.

բ) զուգավորումների ու ծննդաբերության հաշվառում.

գ) անասունների քաշի հաշվառում.

դ) հասակավոր անասունների կերակրման հաշվառում.

ե) մատղաշների կերակրման և աճի հաշվառում։

13. Հաշվառման համար անհրաժեշտ է անասուններին ճիշտ համարակալել։

14. Արտադրողների խնամքի գործը հանձնարարել փորձված կոլտնտեսականների, վորոնք լավ ծանոթ են զուգավորման տեխնիկային։

15. Արտադրողներին ամեն որ պետք է մաքրել ու ապահովել լավորակ ցամքարով։

16. Արտադրողները պետք է լինեն մինչին դրության։

Չի թույլատրվում արտադրողներին պահել ճարպակալած կամ լղարած դրության մեջ։

IV. ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Կաթնատու կովերն իրենց հղիության շրջանում պետք է կերակրվեն լավ վորակի կոշտ կերով։ Հղի կովերին չի կարելի տալ վատ վորակի սիլոս ու սառած արմատապտուղներ։ Հորթի զարգացման համար հղի կովի որական կերաբաժինը հղիության 7-րդ ամսից պետք է ավելացնել 400 գրամ խտացրած կերով և 1200 գրամ մարգագետնային խոտով։

Կովի ծննդաբերության վերջին 2 ամսում բոլորովին դադարեցնել սիլոս տալը։

2. Հղի կովերին պետք է ամեն որ դուրս բերել զբոսանքի։

3. Ծնելուց մի քանի որ առաջ հղի անասուններին պետք է անջատել ընդհանուր գոմում կապած անասուններից և առանձնացնել ծննդաբերության հատուկ շենքում։

Ծննդաբերության ժամանակաշրջանում պետք է հերթապահություն նշանակել ամբողջ 24 ժամվա ընթացքում։

4. Ծնված հորթին մաքրում ու չորացնում են, վորից հետո տեղավորում են հորթանոցում, առանձին վանդակի մեջ։ Առաջին 10 որը կերակրում են մոր կաթով։

5. Այն դեպքում, երբ հորթերը մորից կտրում են, առաջին 15—20 որը հորթերին պետք է կերակրել անքաշ կաթով, վորից հետո հետզհետե կարելի յե անցնել յերեսը քաշած կաթով կերակրելուն։

6. Տոհմական անասունների մատղաշները կերակրվում են նրանց համար սահմանված հատուկ նորմաներով։

7. Հորթերին կերակրել անքաշ ու քաշած թարմ, մաքուր ու միանգամայն առողջ կովերից ստացած կաթով։

8. Թոքախտ ու այլ տեսակի հիվանդություններ ունեցող կովերից ստացված և մի ամանում խառնած կաթով հորթերին կերակրելիս, առաջ պետք է այդ կաթը 5—10 րոպե յեռացնել մինչև 80°C, ապա միայն տալ հորթին։

9. Քսան որական հասակից հորթերին կարելի յե կերակրել խտացրած կերով, վորոշ խառնուրդի հետ, որինակ՝ մեկական բաժին թեփ, գարի կամ վարսակ և յեգիպտացորեն (կուկուռուզ)։

Խտացած կերը պետք է տալ աղացած ու չորացրած դրությամբ։

10. Քսան որական հասակից հորթերին կարելի յե կերակրել թիթեռնածաղկային խոտաբույսերով, վորոնք համարվում են ամենալավ տեսակի խոտեր։

11. Հյութալի կերերով կարելի յե կերակրել 6 ամսական հասակից։

12. Մատղաշներին հետզհետե պետք է սովորեցնել արոտի, առանձնացնելով նրանց համար ամենալավ արոտատեղերը։

Հորթերին ցածր ու հահճոտ վայրերում չպետք է արածեցնել։

13. Հորթերի որվա կերաբաժնին պետք է ավելացնել կերակրի աղ, խտացրած կերի $1^1/_2$—$5^0/_0$-ի չափով, կոշտ դրությամբ միշտ պահելով մսուրի մեջ։

Թիթեռնածաղկային խոտեր չլինելու դեպքում պետք է խտացրած կերին ավելացնել կավիճ ու վոսկրալյուր կերակրի աղի չափ։

14. Հորթերին պետք է ջրել մաքուր և գոմի ջերմություն ունեցող ջրով։

15. Անհրաժեշտ է հորթերին ամեն որ դուրս բերել զբոսանքի։

16. Հորթանոցն ու մսուրը պետք է ամեն որ մաքրել։

17. Կերակրելուց հետո հորթերի դունչը մաքրել։

18. Ծնած հորթերին անմիջապես համարակալել։

19. Հինգ ամսական հասակից արու հորթերին առանձնացնել եգ հորթերից։

20. Այն ամանները, վորից կերակրվում է հորթը, պետք է մաքուր լինի։

21. Հորթերն ամրացվում են հատուկ խնամող անձնավորության։

Ամանները լվանալու համար կերի բաժնում պետք է պահել յեռացրած ջրով լեքը կաթսա։

22. Հորթանոցը պետք է լինի մաքուր, չոր, լուսավոր, իսկ ձմեռվա ջերմաստիճանը 12-ից վոչ պակաս։

V. ԼԱՎՈՐԱԿ ԿԱԹ ՍՏԱՆԱԼԸ

1. Անասուններին պետք է պահել չոր, մաքուր, լուսավոր ու լավ ոդափոխվող գոմերում։

2. Գոմում պետք է լինի լվացարան, ձեռքը և կովերի կուրծքը մաքրելու սրբիչներ, ոճառ և կթի նստելու փոքրիկ աթոռ։

3. Կով կթողները պետք է լինեն առողջ։ Աշխատանքի ընդունման ժամանակ ու այնուհետև տարեկան յերկու անգամ նրանք պետք է յենթարկվեն բժշկական քննության։

4. Կով կթողների արտահագուստները (գոդնոց և այլն) պետք է մաքուր լինի։

5. Ցուրաքանչյուր կով կթելուց առաջ և հետո, կով կթողը պետք է մաքուր լվանա ձեռքերն ու չորացնի սրբիչով։

6. Կով կթողները յեղունկները պետք է կտրեն, վորովհետև յեղունկների մեջ կեղտ է լինում, վորը կթելու ժամանակ կարող է վատնդել կուրծն ու պտուկները, առաջացնելով բորբոքում և այլ հիվանդություններ։

7. Կթելուց հետո կովի պտուկներն ու կուրծը պետք է սրբիչով մաքուր չորացնել։

8. Կիթը կատարել վոչ թե մատներով, այլ բռունցքով կուրծքը մաքուր կթել։

9. Կթել միշտ միևնույն ժամին, կթելու ընդմիջումները պետք է հավասար լինեն։

10. Կով կթողները պետք է կովերի հետ քնքուշ վարվեն. կոպիտ կով կթողները փչացնում են կովերին։

11. Կով կթողներին չպետք է փոփոխել, ամեն մի փոփոխումից պակասում է կաթի չափը։

12. Կթելու ժամանակ գոմերում վոչ մի աշխատանք չպետք է կատարել։

13. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել մաքուր կթելու վրա։

Մաքուր կթելն ավելացնում է կաթի քանակը։

Կաթի վերջին բաժինն ավելի յուղոտ է։

14. Կաթը պատահական խառնուրդներից պետք է զտել։

Զտումը կատարվում է ֆիլտրի կամ բարակ կտորի (սպիտակ մարլայի) միջոցով։ Դունավոր (ներկված) կտորով զտելն արգելվում է։

15. Կթելուց հետո կաթն անմիջապես պետք է դուրս տանել գոմից։

16. Զտած կաթն անմիջապես սառեցնելու նպատակով, անցկացնել սառեցնող մեքենայի միջով։

17. Հատուկ ուշադրություն դարձնել կաթնամանների լվանալու վրա։ Լվանալուց հետո յեռացնել և խոզանակով մաքրել, վորից հետո վողողել մաքուր ջրով։ Լվացած ամանների բերանները չպետք է ծածկել, վորովհետև ամանները ժանգոտում են ու վատ հոտ է գալիս նրանցից։

ՄԱՆՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Տնտեսության բոլոր վոչխարները բաժանվում են հոտերի ըստ իրենց ցեղի, հասակի ու սեռի։ Յուրաքանչյուր հոտին սպասարկում է հովիվների մի վորոշ խումբ, վորն ամրացվում է տվյալ հոտին մի տարով անընդհատ, ընդվորում սեզոնային աշխատանքի ժամանակ այդ հովիվների թիվն ավելացվում է համամասպատասխան չափով։

2. Հղի մայր վոչխարների հոտին պետք է ամրացնել փորձված հովիվներին։

3. Վոչխարներին չպետք է արածեցնել խոնավ, ճահճոտ արոտավայրերում հիվանդություններից խուսափելու համար։

4. Վոչխարներին արոտ պետք է քշել արածելու առավոտյան շաղը վերանալուց հետո։

Վոչխարներն արածեցնելու ժամանակ պետք է հետևել, վորպեսզի հոտը շարժվի դանդաղ և լայնարձակ ճակատով, վորպեսզի վոչխարները հավասարապես արածեն։

Պետք է ջրել միայն ջրհորների ու հոսող ջրերով։ Ճահիճների ջրով ջրելն արգելվում է։

Պետք է հետևել, վորպեսզի հիվանդ ու առողջ վոչխարները նույն տեղից չջրվեն։

Ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային արոտներում պետք է սահմանել հերթականություն՝ սկզբում արածեցնել բազայից հեռու գտնվող տարածությունները, ապա հետզհետե մոտենալ վոչխարանոցների մոտ գտնվող արոտավայրերին։

II. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

1. Զուգավորման համար նախատեսնված մայր վոչխարների հոտը նախորոք պետք է բաժանել ըստ ցեղի, առողջության և դիրության։

2. Զուգավորման համար կազմված այդ հոտերում, ինչպես խրոնիկական ու վարակիչ հիվանդություններ ունեցող (քոս, ծաղիկ, սպիտիդեմիա, կաղլիկ), այնպես էլ հասակավոր ու ձմեռը պահելու համար անպիտան մայր վոչխարներ չպետք է լինեն։

3. Նիհարած ու հյուծված մայր վոչխարներին պետք է առանձնացնել առանձին հոտում՝ լավ կերակրելու նպատակով։

4. Զուգավորումն անցկացնելու համար մայր վոչխարների հոտերն ամրացնել հատուկ բաղանների։

5. Զուգավորման համար նախատեսված շենքերը պետք է նախորոք մաքրել ու ախտահանել։

6. Արտադրող վոչխարը (ոչը) պետք է բավարարի այն ցեղի պահանջներին, որը ճանաչված է որպես ապնվացնող ցեղ։

7. Կոշտ բուրդ ունեցող մայր վոչխարներն ու արտադրողները պետք է զուգավորման թողնել $1^1/_2$ տարեկան հասակից վոչ վաղ։

8. Մերինոսի ապնվացեղ մայրերը պետք է զուգավորման թողնել $2—2^1/_2$ տարեկան հասակում։

9. Զուգավորումը պետք է տևի 40-որից վոչ ավել։

10. Զուգավորման ամբողջ շրջանում, ձեռնաքաշ զուգավորման ժամանակ, մեկ չափահաս արտադրողի բեռնավորման նորման պետք է հանի 50—60 մայր վոչխարի, իսկ մատղաշ $1—1^1/_2$ տարեկան արտադրողի նորման՝ 25 մայր վոչխարի։

11. Զուգավորումից $1^1/_2—2$ ժամ առաջ՝ արտադրողներին չպետք է ջրել ու կերակրել կոշտ կերով, զուգավորումից հետո պետք է արտադրողին հանգիստ տալ։

III. ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

1. Ձմեռային շրջանում անհրաժեշտ է բոլոր վոչխարներին ապահովել ծածկած շենքերով հետևյալ հաշվառումով՝

ա) ապնվացեղ վոչխարների 1 գլխի համար 1,2 ք. մ.

բ) ոգտագործելիք (տեղական) » » 0,8 » »

2. Վոչխարանոցներն ապահովել անհրաժեշտ ինվենտարով, մուրներով, տաշտակներով և այլն։

Յուրաքանչյուր 25 վոչխարի համար պետք է ունենալ մեկ հատ մուր և մեկ հատ տաշտակ։

3. Ձմեռային արոտավայրերում յեղած ջրհորներն ու ջրամբարները մաքրել։

4. Ձմեռային արոտավայրերում պետք է կոշտ խոտի պաշար ունենալ, պատահական որերին ու արոտավայրերում խոտ չեղած դեպքում վոչխարներին կերակերելու համար։

5. Այն դեպքում, յերբ մայր վոչխարը չի թողնում գառին ծծելու, պետք է վորոշ ժամանակով յերկուսին պահել մի վանդակում։ Նույնը պետք է անել, յերբ վոչխարին տալիս են ոտար գառ։

6. Այն դեպքում, յերբ վոչխարը դույգ է ծնել և չի կարողանում յերկուսին լրիվ կերակրել կաթի քչության պատճառով, պետք է գառներից մեկին անջատել, տալով այնպիսի մոր, վորն առատ կաթ ունի, կամ կոցրել է իր գառին։

7. Առանց շենքն ախտահանելու վոչխարներին չի կարելի տեղավորել այնտեղ։

8. Մերինոս արու գառների (վորոնք ցեղի ապնվացման աշխատանքի համար անպետք են) ամորձատումը և պոչերի կտրելը պետք է կատարել յերկու շաբաթական հասակում, պահպանելով բոլոր անասնաբուժական ու առողջապահական կանոնները։

9. Վոչ մի դեպքում չի թույլատրվում արտադրողներին (ոչերին) պահել մայր վոչխարների հետ։

IV. ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԾՆԵԼՈՒ ԿԱՄՊԱՆԻԱՆ

1. Վոչխարների ծնելուց առաջ պետք է բավարար չափով տախտակյա ճաղեր պատրաստել—վանդակների համար։

2. Արոտավայրերում ծնած մայր վոչխարներին ու գառներին փոխադրելու համար գործիքներ պատրաստել (նոսիլկա)։

3. Ջրելու վայրը ջուր տեղափոխելու համար տակառներ պատրաստել։

4. Վոչխարների ծինն սկսելուց 10-որ առաջ մաքրել ու ախտահանել վոչխարանոցներն ու վոչխարաբուծական վողջ ինվենտարը։

5. Վոչխարների ծնելուց մեկ ամիս առաջ վերանայել բոլոր մայր վոչխարներին, թույլերին առանձնացնել և կազմելով հատուկ խումբ, ուժեղ կերակրել այդպիսիներին։

6. Վիժումներից խուսափելու համար, վոչ մի դեպքում մայր վոչխարներին չպետք է տալ բորբոսնած ու սառած կեր։

7. Կերակրելու և ջրելու ժամանակ պետք է հետևել, վորպեսզի վոչխարները միմյանց չսեղմեն, չհրեն, այլ ուտեն հավասարաչափ։

8. Դիշերները ամեն մի հոսի մոտ պետք է հերթապահ նշանակել ծննդաբերության գործին ծանոթ, փորձված հովիշներից՝ ոգնություն ցույց տալու համար՝ ինչպես ծնվող մայր վոչխարին, այնպես էլ գառին։

9. Հղիության 2-րդ շրջանում արգելվում է յերկար ճանապարհ տանելը։

10. Կանոնավոր ծննդաբերության ժամանակ ոգնության կարիք չկա. ոգնություն պետք է ցույց տալ անկանոն ծննդաբերության ժամանակ միայն։

11. Ծննդաբերությունից հետո արբանքը (այն թաղանթը, վորի մեջն է լինում գառը մոր արգանդում) վոչխարի տակի փրուվածքի հետ միասին հեռացնելով գոմից, պետք է թաղել կամ այրել։

12. Նորածին գառների պորտին պետք է կրեոլին կամ վորևե այլ աֆտահանման դեղ քսել։

13. Ամառային կերի անցնելիս, ծնած վոչխարներին պետք է հատկացնել վոչխարանոցին մոտիկ ամենալավ արոտները։

V. ԽՈՒՋԵԼԸ

1. Վոչխարներին խուզելու համար պետք է հատկացնել չոր, մաքուր և լուսավոր շենք։

2. Վոչ մի դեպքում չի թույլատրվում վոչխարներին խուզել գետնի վրա։ Պետք է խուզել բրեզենտի կամ բարակ տախտակների վրա։

3. Վոչխարին խուզել բրդի չոր ժամանակ։

4. Վոչխարը պետք է խուզել միայն սոված ժամանակ։

5. Խուզելուց հետո պետք է ուշադիր նայել և, յեթե կարված տեղեր կան, վերքերին պետք է աֆտահանիչ վորևե դեղ քսել։

6. Խուզելն ու բրդի դասավորումը պետք է կատարել ըստ վոչխարի ցեղի, գույնի և տեսակի։

7. Դասավորված բուրդը պետք է պահել չոր տեղում։

ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

I. ԽՈԶԵՐԻՆ ՃԻՇՏ ԿԵՐԱԿՐԵԼ

1. Խոզերին կերակրել վորոշված նորմայի համապատասխան։

2. Կերակրման համար հիմք ընդունել կոլտնտեսությունում յեղած կերի մնացորդները։

3. Բոլոր հացահատիկային կերերը մանրացնել, չափահաս խոզերի համար խոտը մանր կտրել, իսկ մինչև 4 ամսական խոճկորների համար դարձնել ալյուր։ Կոպիտ տեսակի կերերը և դարմանը տաք ջրով խաշել ու հետը խառնելով վորևե խտացրած կեր, լավացնել վորակը։

Կարտոֆիլը կերերի ռացիոնում շատ յեղած դեպքում պետք է խաշել, քիչ յեղած դեպքում կարելի յե հում տալ։ Ցլած կարտոֆիլն անպայման պետք է յեփել, ճակնդեղը, ատեղղինը և այլ տեսակի արմատապտուղները պետք է մանրած տալ։

4. Տրվելիք կերերը պատրաստել կերակրելուց 1—2 ժամ առաջ։

5. Խոզերին՝ մսուրային կերակրման շրջանում պետք է փայտի ածուխ տալ։

6. Կերերի ռացիոնում անպայման ավելացնել վոսկրալյուր, կավիճ կամ հանդած կիր և կերակրի աղ։

7. Կերակրել միայն մսուրներում, վորից հետո անպայման մսուրները լվանալ։

II. ՀԵՏԵՎԵԼ ԼԱՎ ԽՈԶԵՐԻՆ ՋՈԿԵԼ-ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼ

1. Բոլոր խոզերին համարակալել։

2. Հաշվառման յենթարկել՝

ա) արդյունավետությունը.

բ) կաթնատվությունը.

գ) խոճկորների քանակն ու քաշը մայրերից կտրելու ժամանակ.

դ) վաղահասությունը (խոճկորների քանակն ու քաշն 6 ամսական հասակում).

3. Ստացած ոչխարների համաձայն յերթարկել բուման (бонитировка):

4. Տոհմական անասունները ներմուծելիս, նույնպես և մյուս տնտեսություններից վերցնելիս (գնելիս), ընտրել այնպիսիները որոնց արդյունավետությունը հայտնի յե ծնողների գծով:

III. ՉՈՐ ՅԵՎ ԱՌՈՂՋ ԽՈՋԱՆՈՑ

1. Խոզերին ապահովել չոր խոզանոցներով, որի համար պետք է՝ խոզանոց կառուցելու համար ընտրել մի փոքր բարձրադիր ու ջրաթափանց տեղ:

2. Խոզանոցները ձմեռը տաքացնել: Պատուհաններն ու դռներն ամուր փակել:

3. Խոզանոցներն սպիտակացնել գարնանը, ամառն ու աշնանը: Ձմեռն սպիտակացնել ծայրահեղ դեպքում, այն ել յեթե կպահանջվի անասնաբուժական պերսոնալի կողմից:

4, Խոզանոցները մաքրել մեքենայացրած չոր ձեվով: Վորպեսզի չոժանդակել խոնավության տարածմանը, արգելել խոզանոցներում մսուրների ու իրերի լվանալը: Բոլոր խոզերին, բացի հղիության 2-րդ շրջանում յեղած մայր խոզերից, կերակրել հատուկ շենքում:

5. Խոզանոցներում պահպանել համաչափ ջերմություն:

6. Հղի մայրերի ծննդաբերության շենքում ունենալ վառարան:

7. Շատ խոնավ խոզանոցներում պահել արկղներով չհանդած կիր:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՈՋԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԽՆԱՄՔ

1. Տեղական խոզերին կարելի յե զուգավորման թողնել վոչ շուտ քան մեկ տարեկան հասակից, իսկ մեսխներին վոչ շուտ 9—10 ամսականից:

2. Արդյունաբերական տնտեսություններում ձագերին ծիծ տվող խոզերին կարելի յե զուգավորման թողնել վոչ շուտ 8—9 ամսական հասակից (յեթե հյուծված չի):

3. Յերիտասարդ մայրերին, վորոնց առաջին ծնունդն է, ձագերին ծիծ տալու ժամանակաշրջանում զուգավորման չթողնել:

4. Մայրերին կերակրել որական 2 անգամ, իսկ ջրել 3 անգամ:

II- 273689

5. Որպես ընթացքում 2 ժամից վոչ պակաս զբոսանքի հանել:

6. Մայր խոզերի հղիության 2-րդ շրջանում ապահովել լավորակ ցամքաթով, որական մեկ կիլոյի չափով:

7. Ծնելուց յերկու յերեք որ առաջ կերերի կերաբաժինը պակասեցնել 70%-ի չափով:

8. Ծնելուց 10 որ առաջ հղի մայրերին՝ ձմեռը լավ մաքրել իսկ ամառը լողացնել:

9. Հղի մայրերի ծննդաբերությունը կատարել անհատական ձևով, հատուկ դաղդյահներում:

10. Ազատվելուց առաջ դաղդյահները (սատանոկները) հիմնովին մաքրել, ախտահանել, փռել մանրացրած թարմ ցամքաթ, վորը փոխել ամեն որ:

11. Նորածին մայր խոզի խոզանոցի ջերմությունը պետք է լինի 8—10°C, իսկ մյուս խոզերի համար 6—7°C:

12. Ազատվելուց առաջ—յեթե մայր խոզը թույլատրում է—պետք է հետևի մասն ու կուրծքը լվանալ և ախտահանել: Ծնած խոճկորի դունչն ու բերանը մաքրել լուրձունքից, շորով սրբել, պորտը կտրել և ախտահանել:

13. Ծննդաբերությունը վերջանալուց հետո դաղդյահը մաքրել, ցամքաթը փոխել և յեթե մայրը կեղտոտվել է իրեն արյունից—լավ մաքրել, ապա նոր խոճկորներին թողնել ծծելու:

14. Ծծմայր խոզի տակ թողնել ծծելու այնքան խոճկորներ, վորքան զարգացած՝ պտուկներ ունի մայր խոզը: Ավելացած խոճկորներին թողնել ուրիշ մայր խոզերի տակ, կամ կերակրել առողջ կովից ստացած մաքուր, թարմ, անքաշ կաթով:

15. Ծննդաբերության խոզանոցներն ապահովել անընդհատ հերթապահությամբ, իսկ ծննդաբերության ժամանակ հերթապահը պետք է անընդհատ լինի ազատվող մայր խոզերի մոտ:

16. Մայր խոզերի ազատվելու առաջին 3—5 որերը և ազատվելուց հետո պետք է կերակրել ջրիկ կերերով և հետևել ստամոքսի կանոնավորությանը: Ջրիվ կերաբաժնի տալը կատարել հետդհետե: Որական կերակրել 3 անգամ:

17. Մայրերին 5-րդ, իսկ խոճկորներին 10-րդ որից վոչ ուշ պետք է հանել զբոսանքի, զբոսանքի ժամերը հարմարեցնելով յեղանակի և խոճկորների առողջության հետ:

18. Տասնհինգ որական հասակից կարելի յե խոճկորներին դեր-կերակրման կապել: Խոճկորներին հատուկ դաղդյահներում կարելի յե թեթև կերակրել [illegible] հատիկով: 20 որական

յասակից խոճկորներին պարբերաբար սկսել կերակրել հացահատիկային խառնուրդներով։ Կերակրման ժամենտից խոճկորներին ապահովել մաքուր ջրով 10—15°C ջերմությամբ։

19. Մատղաշներին մայրերից կտրելուց հետո կերակրել ռացիոնով որակն 3 անգամ։

V. ՄԱՏՂԱՇՆԵՐ

1. Արդյունաբերական տնտեսություններում մայրերից կտրած մատղաշներին բաժանել խմբերի ըստ նրանց կենդանի քաշի և հետևել, վորպեսզի քաշով փոքրերը զարգանալու (աճելու) դեպքում տեղափոխվեն իրենց քաշին համապատասխան բարձր խումբը։

2. Տոհմական տնտեսություններում արու խոճկորներն առանձնացնել եզերից 4-րդ ամսում և յենթարկել առաջին խոտանման.

3. Զորբորդ ամսից հետո կերակրել որակն 3 անգամ։

VI. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ

1. Կուլտուրական ցեղի արտադրողներին բեղմնավորման թողնել 10—12 ամսական հասակում, իսկ տեղական գործադրվելիք ցեղեր արտադրողներին՝ 15—18 ամսական հասակում։

2. Զուգավորումն անցկացնել ձեռնաքաշ, առավոտյան կամ յերեկոյան պահին, կերակրելուց մի ժամ հետո։

3. Բաց բակերում պահվող արուներին որակն 1 ժամ պարտադիր կերպով հանել զբոսանքի.

4. Արտադրողների ժանիքները կտրել, հետևել նրանց սմբակներին—մաքրել ու կտրել.

5. Արտադրողի միջին բեռնվածությունը՝

1-ին տարում	15—20	հոտի	ծածկում	
2-րդ »	30—40	»	»	
3-րդ »	40—50	»	»	

6. Արտադրողներին որակն կերակրել 3 անգամ և ջրել մաքուր ջրով ապատ վիճակում։

7. Արտադրողներին պահել առանձին դաղգյահներում։

8. Զուգավորման հանել որակն մեկ անգամից վոչ ավել։

VII. ԽՈԶԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

1. Ամառը բոլոր խոզերին, բացի ծծվայր խոզերից իրենց խոճկորներով, հղիության 2-րդ շրջանում գտնվածներին, պետք է պահել արոտավայրերի մոտ գտնված բազաներում։

2. Բազաները պետք է ապահովված լինեն հատուկ շենքերով խոզերին պաշտպանելու համար արևից ու ցրտից.

3. Մուրային շրջանից ամառվա արոտավայրերին անցնելը պետք է կատարվի աստիճանաբար։

4. Խոզերին նախ քան արոտավայրերն ուղարկելը, պետք է քննվեն այդ արոտավայրերն անասնաբուժական անձնակազմի կողմից։

5. Թարմ արոտավայրերում առաջին հերթին արածելու բաց թողնել 4 ամսական խոճկորներին, վորդերով վարակվելուց խուսափելու համար։

6. Արոտատեղերը թույլատրվում է ոգտագործել մեկ տարի, հետևյալ տարին տվյալ տարածությանը տալ մեկ տարի հանգիստ։

7. Նախքան առավոտյան կերակրելը, բոլոր խոզերին 1—2 ժամով պետք է ուղարկել արածելու, վորից հետո 1—2 ժամ հանգիստ տալ և ապա միայն կերակրել։

8. Խոզերը յերկրորդ անգամ արածելու յեն ուղարկվում յերեկոյան կերակրելուց առաջ, պահպանելով նույն կանոնները։

9. Արոտավայրերը փչացումից զերծ պահելու նպատակով, խոզերին արձրևից հետո չուղարկել արածելու։

10. Խոզերին արև-տաք ժամանակին փոխադրելուց խուսափել, այդ պետք է կատարել առավոտյան լուսաբացին կամ յերեկոյան հովին։

11. Խոզերի արոտատեղերում մյուս տեսակի անասուններ չպետք է արածեցնել։

VIII. ԽՈԶԵՐԻՆ ԽՄԲՈՎԻՆ ՊԱՀԵԼԸ

1. Թույլատրվում է խմբովին պահել բոլոր խոզերին, բացառությամբ ծծվայր խոզերից ու հղիության 2-րդ կիսում յեղած ժայր խոզերից։

2. Չսեռը 10 հղի ու վոչ հղի խոզերից կարելի յե մի խումբ կազմել։

3. Ձմեռային խնամքի ժամանակ կարելի է մայրերից նոր կարված 10—15 խոճկորներից մի խումբ կազմել, իսկ գեր-կերակրման հասակացված մատղաշներից, 10-ից մի խումբ։

4. Խմբերը կազմել ըստ հասակի, քաշի, դիրության ու տեմպերամենտի։



ՀՀ Ազգային գրադարան
NL0404545

ԳԻՆԸ 30 ԿՊ.

19

11

27368

Правила животноводства
(ЗООМИНИМУМ)

Сельхозгиз 1934 Эривань